ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ ԼՂԻՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱԴՐ. ԽՍՀ ԿԱԶՄԻՑ ԴՈՒՐՍԲԵՐՄԱՆ ՇՐՋԱՆԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ (1923-1989ԹԹ.)

Հրայր Փաշայան[*]

Բանալի բառեր ՝Ղարաբաղյան հակամարտություն, արդարացի կարգավորում, իրավաքաղաքական փաստաթղթեր:

Ղարաբաղյան հակամարտության մասին ամբողջական պատկերացում կազմելու և նրա էությունը համապարփակ ընկալելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի այսպես կոչված խորհրդային սառեցման տարիներին ընդունված իրավաքաղաքական փաստաթղթերի ուսումնասիրությունը: ԼՂԻՄ կազմավորման և Ադր. ԽՍՀ կազմից դուրսբերման շրջանի փաստաթղթերում առկա են մի շարք իրավաքաղաքական փաստարկներ, որոնք, հիմնախնդրի կարգավորմանն ուղղված գործընթացում ճիշտ ներկայացնելու և միջազգային հանրությանը հավուր պատշաճի մատուցելու դեպքում, հիմքեր կստեղծեն նրա արդարացի կարգավորման համար: Միաժամանակ, դրանք բացահայտում են Ադր. ԽՍՀ ղեկավարության, ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների և միջազգային հանրության՝ հիմնախնդրի նկատմամբ տվյալ ժամանակահատվածում որդեգրած քաղաքականության միտումները:

[*] Արցախի պետական համալսարանի փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս:

1923-1989թթ. ժամանակահատվածի առանձնացման հիմքում ընկած է մեր կողմից ներկայացվող այն թեզը, որ, ինչպես ցույց են տալիս այդ ընթացքում ընդունված իրավաքաղաքական փաստաթղթերը, Լեռնային Ղարաբաղը Ադր. ԽՍՀ կազմ է մտցվել և փաստացիորեն նրա կազմից դուրս է բերվել ԽՍՀՄ գոյության տարիներին: Փաստաթղթերից բխող կարևոր փաստարկներից մեկն էլ կապված է այն հանգամանքի հետ, որ նույնիսկ խորհրդային տարիներին իր սահմաններում ընդգրկված տարածքների, մասնավորապես՝ Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի հարցերը չեն եղել Ադր. ԽՍՀ ներքին գործը, ԽՍՀՄ միասնական միութենական երկրի Սահմանադրության ու օրենքների տեսակետից: Ինչպես իրավամբ նշում է Ա.Մանասյանը. «ԽՍՀՄ Սահմանադրությունը այնքան գործառույթներ է օտարել միութենական հանրապետություններից (բանակ, տարադրամ, պետական սահման, քաղաքացիություն, արտաքին քաղաքականություն և այլն) և այնքան բան է թողել ինքնավարություններին (միութենական հանրապետության հետ համահավասար ԽՍՀՄ բարձրագույն օրենսդիր մարմիններում ներկայացված լինելու իրավունք, իր սահմաններն առանց իր համաձայնության փոխելու անթույլատրելիություն, միութենական հանրապետության ԽՍՀՄ-ից դուրս գալու դեպքում իր պետական իրավական կարգավիճակը ինքնուրույն որոշելու իրավունք և այլն), որ փաստորեն ինքնավարությունների և միութենական հանրապետությունների կարգավիճակների տարբերությունը հասցվել է նվազագույնի: Միակ «էական» տարբերությունը թերևս այն էր, որ միութենական հանրապետություններն ունեին Սահմանադրություն, որի նշանակությունը ԽՍՀՄ Սահմանադրության գերակայության պայմաններում ըստ էության հանգում էր զրոյի: Միութենական հանրապետությունների Սահմանադրությունները ոչ մի դրույթ չէին կարող պարունակել, որ հակասեր ԽՍՀՄ Սահմանադրությանը» [1, էջ 40-41]: Բացի ԽՍՀՄ Սահմանադրությունից, Բաքվի ինքնիշխանությունն իրեն

հանձնված տարածքներում սահմանափակող այլ փաստարկներ ևս կան: Նախիջևանի դեպքում դա մինչև օրս գործող Կարսի 1921թ. մարտի 16-ի պայմանագիրն է, իսկ ԼՂԻՄ դեպքում՝ Կովբյուրոյի միջազգային պայմանագրի հավասարեցված 1921թ. հուլիսի 5-ի որոշման երկրորդ կետը: Մեր կարծիքով, վերջին հանգամանքի գիտակցումն է Ադր. ԽՍՀ ղեկավարությանը դրդել ձգձգելու, իսկ հնարավորության դեպքում՝ նաև կասեցնելու ԼՂԻՄ կազմավորումը[1]: Այդ քաղաքականության արդյունքում շուրջ երկու տարի «պահանջվեց» Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունից 1921թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի որոշման կետերի մեծամասնությանը հակասող «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի» կազմավորման մասին դեկրետն ընդունելու համար [3, c. 384-385]: Փաստաթղթից բխում են հետևյալ իրավաքաղաքական փաստարկները.

1. Դեկրետի ընդունման հիմնական քաղաքական գաղափարը, ինչպես նշված է փաստաթղթի հիմնավորման մեջ, հանդիսանում է հայ-մուսուլմանական հարաբերությունների կարգավորումը, երկու ժողովուրդների՝ հայերի և մուսուլմանների *«միասնական պետական միության մեջ»:*
2. Ադր. ԽՍՀ սահմաններում ներառված տարածքների պատկանելության տարընթերցումներից խուսափելու համար դեկրետը հատուկ ծանոթագրություն է պարունակում այն մասին, որ *«բոլոր արոտավայրերը, այգիները և հողի ու ջրի փաստական տնօրինումը ներկայիս տերերի գործն է»:*

[1] 1921թ. հոկտեմբերի 21-ին հրավիրված Ղարաբաղի պատասխանատու աշխատողների կոնֆերանսում «Ղարաբաղի դրության մասին» զեկուցումով հանդես գալով՝ Ա.Կարանն (այսպես կոչված ղարաբաղյան գործով ստեղծված հատուկ հանձնաժողովի նախագահ) ընդունեց այսպիսի որոշում. «Ղարաբաղի աշխատողների կոնֆերանսը աննպատակահարմար է համարում Լեռնային Ղարաբաղի բաժանումն իբրև առանձին ինքնավար մարզի և գտնում է, որ բոլոր միջոցառումները, որոնք նշվում են վերը՝ բանաձևում, հենց հանդիսանում են ղարաբաղյան հարցի լուծում» [2, c. 64]:

3. Խախտելով ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի որոշումը՝ Ադրբեջանի Կենտգործկոմը որոշեց մարզը ստեղծել *«Լեռնային Ղարաբաղի հայկական մասից»:* Մինչդեռ որոշման մեջ հստակ նշված է. *«Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ԽՍՀ սահմաններում՝ նրան տալով մարզային լայն ինքնավարություն՝ վարչական կենտրոն Շուշի քաղաքով»:* Այսինքն՝ լայն ինքնավարությունը պետք է տրվեր ոչ թե նրա մի մասին, այլ ողջ Լեռնային Ղարաբաղին: Արդյունքում՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ 12 հազար քառակուսի կիլոմետր տարածքից ստեղծվեց 4,4 հազար քառակուսի կիլոմետր տարածք ընդգրկող ԼՂԻՄ-ը:
4. Մարզի կազմավորման գործընթացում ոչ միայն նրա սահմաններից դուրս թողնվեցին մի շարք հայաբնակ ու հայկական տարածքներ, այլև մարզը ստեղծվեց որպես անկլավային կազմավորում, այնպիսի սահմաններով, որ այն անջրպետված էր ՀԽՍՀ-ից ու Ադր. ԽՍՀ սահմաններում թողնված հայկական մյուս տարածքներից, զրկված կենսապահովման ինքնուրույն հնարավորություններից (ճանապարհների, ջրի, կապի, մատակարարման, հումքի մշակման և այլ հարցերում): Հենց այդպիսի նպատակ էր հետապնդում Լեռնային Ղարաբաղի տարածքում ԼՂԻՄ-ին զուգահեռ արհեստականորեն ստեղծված «Կարմիր Քրդստանը», որն իր դերակատարությունն ավարտելով՝ վերացվեց 1929 թվականին, իսկ այդ տարածքներն ուղղակիորեն մտցվեցին Ադր. ԽՍՀ կազմ [4]:
5. «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի» կազմավորման մասին դեկրետով խախտվել է նաև մարզկենտրոնի տեղակայման հարցը: Եթե 1921թ. ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի որոշմամբ ինքնավարության վարչական կենտրոն պետք է դառնար դարերով Արցախի քաղաքական, տնտեսական, մշակութային կենտրոն հանդիսացած Շուշի քաղաքը, ապա դեկրետով որպես մարզկենտրոն

ընտրվեց Խանքենդի բնակավայրը (պատմական Վարարակն, ներկայիս Ստեփանակերտը):

1923թ. հուլիսի 31-ին Ադրբեջանի Կենտգործկոմի ընդունած «Պետական ձեռնարկությունների ազգայնացման մասին» դեկրետը [5, 01.08.1923.] նույնպես արձանագրեց Ադր. ԽՍՀ ոչ ազգային բնույթի և ԼՂԻՄ՝ որպես խորհրդային տիպի հայկական պետականության մասին գաղափարը: Մասնավորապես.

1. Դեկրետի վեցերորդ կետում նշված է, որ *Ադր. ԽՍՀ յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի իր հարազատ լեզվով դիմելու ցանկացած խորհրդային ձեռնարկություն, իսկ բոլոր խորհրդային ձեռնարկությունները պարտավոր են պատասխան և պարզաբանում տալ այն լեզվով, որով ներկայացվել է դիմումը:* Սա, փաստորեն, Ադր. ԽՍՀ անդրազգային պետական կազմավորման մասին վկայող փաստարկներից մեկն է:
2. Դեկրետի իններորդ կետը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի՝ որպես խորհրդային տիպի ազգային պետականության կարգավիճակը: Այդ կետում նշված է. *Ինքնավար Ղարաբաղյան մարզի հետ հաղորդակցման լեզուն հայերենն է:*
3. Իսկ ահա Դեկրետի առաջին տողում նշված *«Խորհրդային իշխանության հռչակման պահից Ադրբեջանում թուրքական լեզուն, որպես բնակչության մեծամասնության լեզու, հռչակված է պետական»* արտահայտությունը վկայում է մեկ այլ տարածված փաստարկի մասին: Դա այն է, որ այդ պահին ադրբեջանական կոչվող ազգ գոյություն չի ունեցել, այլապես թուրքական լեզվի փոխարեն որպես պետական լեզու կհռչակվեր էթնոսի անվանումն իր վրա կրող, բայց ցայսօր գոյություն չունեցող լեզու՝ «ադրբեջանականը», ինչպես դա սովորաբար կատարվում էր նորաստեղծ ազգային պետությունների հռչակման դեպքում:

1923 թվականի «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի» կազմավորման մասին դեկրետի ընդունումից մինչև Ադր. ԽՍՀ կազմից նրա փաստացի դուրսբերումը՝ 1989 թվականի հունվարի 12-ի Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծման մասին որոշումը, իրադարձությունները զարգացել են երկու զուգահեռ միտումներով: Այսպես. ինչպես նշվեց, 1921թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի որոշմամբ Լեռնային Ղարաբաղին տրվում էր *լայն ինքնավարություն:* Մինչդեռ, Ադր. ԽՍՀ ղեկավարությունը որդեգրեց ԼՂԻՄ-ի՝ որպես խորհրդային տիպի ազգային (հայկական) պետական կազմավորման, ինքնուրույնությունը սահմանափակելու և նրա ազգային էությունը խեղաթյուրելու քաղաքականություն: Արդեն 1924թ. նոյեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մասին կանոնադրության» երկրորդ կետով ինքնավար մարզում իրականացվող բոլոր գործառույթների, դատական վարույթների և կրթություն ստանալու լեզու է ամրագրվել ոչ թե մարզի բնակչության ճնշող մեծամասնության լեզու «հայերենը», ինչպես նշված է 1923թ. հուլիսի 31-ի «դեկրետի» իններորդ կետում, այլ «մայրենի լեզու» անորոշ ձևակերպումը [2, c. 162]: Բանն այն է, որ ԼՂԻՄ-ը, որպես Ադր. ԽՍՀ կազմում ընդգրկված հայկական պետականություն, յուրօրինակ ձևով հանդիսանում էր նաև ադրբեջանահայության իրավունքների երաշխավորը [6]: Փաստորեն, իր այդպիսի կարգավիճակով մարզն «արգելք էր դարձել» Ադր. ԽՍՀ ղեկավարության որդեգրած նոր՝ «ադրբեջանական» ազգի ստեղծման ու մյուս ազգերին ձուլելու ճանապարհին: Այս առթիվ տեղին է Ադրբեջանի Հանրապետության նախկին նախագահ Հ.Ալիևի խոսքը: «1923 թվականին Լեռնային Ղարաբաղին ինքնավարության տրամադրումը Ադրբեջանի համար պատուհաս է դարձել, իմացեք դա: Ճիշտ է, այդ ժամանակ այն ցանկանում էին տալ Հայաստանին: Ադրբեջանի ղեկավարները ձգտել են և վերջապես հասել են նրան, որ այն մնա Ադրբեջանի կազմում: Պետք է մնար, բայց ոչ ինքնավարության տես-

քով» [5, 12.11.1999],- նշել է նա մի խումբ ադրբեջանական գրողների և բանաստեղծների հետ հանդիպման ժամանակ: Իսկ 1998թ. հունվարի 14-ին ԱՀ Սահմանադրական հանձնաժողովի նստաշրջանում հնչեցրած ելույթում շեշտել է .«Նախիջևանի ինքնավարության ստեղծումը Ադրբեջանի պատմական ձեռքբերումն էր...» [5, 23.01.1998]: Ձեռքբերումն այստեղ կապված է Ադր. ԽՍՀ ղեկավարության իրականացրած այն քաղաքականության հետ, որի արդյունքում Նախիջևանն ամբողջությամբ հայաթափվեց:

ԼՂԻՄ հայաթափման և էթնիկ զտումների ուղղությամբ իրականացված նպատակաուղղված քաղաքականության վերաբերյալ նույնպես բազմաթիվ փաստեր և փաստարկներ գոյություն ունեն [7]: Այդ քաղաքականության մասին հենց իրենք՝ ադրբեջանական ղեկավարներն են բազմիցս վկայել [8]: Դրա արդյունքում 1923-1989թթ. ԼՂԻՄ հայ բնակչության թիվը 66 տարվա ընթացքում (1923-1989թթ.) 149,6 հազարից «հասել» է 145,5 հազարի, այն դեպքում, երբ արհեստականորեն ստեղծված նոր էթնոսի՝ ադրբեջանցիների թիվը նույն ժամանակահատվածում 7,7 հազարից հասել է 40,6 հազարի [7, էջ 14]: Այդուհանդերձ, ի տարբերություն Նախիջևանի, ԼՂԻՄ-ում նրանց չհաջողվեց վերջնական ավարտին հասցնել «սպիտակ եղեռնի» քաղաքականությունը, և ԼՂԻՄ-ը իր գոյությամբ ու անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակմամբ «պատուհաս դարձավ Ադրբեջանի համար»: Միջազգային իրավունքի մասնագետ Շ.Ավակյանն Ադր. ԽՍՀ ղեկավարության՝ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իրականացրած էթնիկ զտումների քաղաքականությունն ուսումնասիրելով միջազգային իրավունքի լույսի ներքո՝ այն եզրակացության է գալիս, որ «Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման կարևորագույն փաստարկն է նաև այն, որ ադրբեջանական պետությունը ոչ մի ոլորտում ոչ միայն չի կարողացել ստեղծել բարենպաստ պայմաններ Լեռնային Ղարաբաղի ազատ և ժողովրդավարական զարգացման համար, այլև պետականո-

րեն ծրագրել և հետևողականորեն իրականացրել է էթնիկ զտումների քաղաքականություն, ինչի արդյունքում Լեռնային Ղարաբաղը սոցիալ-տնտեսական և մշակութային անկում է ապրել» [9, էջ 27]: Սրանք են այն հիմնական պատճառները, որոնք ստիպել են մարզի մեծամասնություն կազմող հայերին Մայր Հայրենիքի հետ վերամիավորվելու իրենց կամքն արտահայտելով՝ բազմաթիվ նամակ-խնդրագրերով դիմել ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին: Դրանցից մեկն էլ 1966թ. ամռանը շուրջ 50 հազար ստորագրություններով ԽՍՀՄ կենտրոնական մարմիններին ուղղված նամակն էր: Մեր կարծիքով, նախքան «վերակառուցման» քաղաքականության հռչակումը, ամբողջատիրական վարչակարգ ունեցող Խորհրդային Միությունում մարզի կամ այլ կազմավորումների ազգաբնակչության կամքն իշխանություններին ներկայացնելու օրինական այլ տարբերակ գոյություն չուներ: Տվյալ դեպքում նման քայլը կարելի է համեմատել բնակչության ինքնորոշման նպատակով կազմակերպվող կամարտահայտության ժամանակակից դրսևորման հետ: Հատկանշական է, որ ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ի հետ վերամիավորելուն ուղղված մարզի աշխատավորների հերթական դիմումին ի պատասխան՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցն արծարծվել է նաև 1977թ. ԽՍՀՄ նոր Սահմանադրության համաժողովրդական քննարկումներում: 1977թ. նոյեմբերի 23-ի ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահության նստաշրջանի արձանագրության մեջ նշված է. «Մի շարք պատմական հանգամանքների բերումով մի քանի տասնյակ տարի առաջ Լեռնային Ղարաբաղն արհեստականորեն միացվել է Ադրբեջանին: Ընդ որում՝ հաշվի չեն առնվել մարզի պատմական անցյալը, ազգային կազմը, ժողովրդի ցանկությունն ու տնտեսական շահերը: Տասնամյակներ են անցել, և Լեռնային Ղարաբաղի հարցը քննարկվում, անհանգստություն է առաջացնում... Անհրաժեշտ է միացնել Լեռնային Ղարաբաղը (հայերեն՝ Արցախ) Հայկական ԽՍՀ-ին: Այդ ժամանակ ամեն բան իր տեղը

կընկնի» [10, c. 665]: Այսինքն՝ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները նույնպես ընդունում էին, որ Լեռնային Ղարաբաղը հայկական տարածք է և հարցի արդարացի կարգավորման համար անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղը միացնել ՀԽՍՀ-ին: Սակայն, ինչպես նման հարցերում է լինում, քաղաքական հաշվարկներն ավելի զորեղ գտնվեցին, քան հարցի արդարացի կարգավորումը:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մասին 1981թ. Ադր. ԽՍՀ օրենքը [11] նույնպես մի շարք փաստարկներ է պարունակում.

1. Ինչպես նկատելի է օրենքի տեքստից, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կարգավիճակը՝ որպես ԽՍՀՄ միասնական միութենական պետության, որոշվել է միասնական պետաիրավական հարթությունում: ԽՍՀՄ Սահմանադրության և օրենքների գերակայությունը մատնանշվել է բոլոր պետաիրավական ակտերում ու փաստաթղթերում: ԼՂԻՄ-ի մասին Ադր. ԽՍՀ օրենքի բոլոր հոդվածներում, որոնք առնչվում էին ԼՂԻՄ պետաիրավական կարգավիճակին, առաջինը հիշատակվում է ԽՍՀՄ Սահմանադրությունը, ապա նոր միայն Ադր. ԽՍՀ Սահմանադրությունը:
2. Օրենքի 65-րդ կետով ամրագրվել է ԼՂԻՄ դատախազի նշանակման Ադր. ԽՍՀ իրավասությունից օտարումը, որն անմիջականորեն նշանակվել է ԽՍՀՄ դատախազի կողմից: *Փաստորեն, ԼՂԻՄ-ում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների ձևավորման լիազորությունները դուրս էին Ադր. ԽՍՀ անմիջական իրավասությունից,* քանի որ ԼՂԻՄ-ում, ինչպես ողջ Խորհրդային Միության տարածքում, գերակա էին ԽՍՀՄ Սահմանադրությունն ու օրենքները, գործադիր իշխանության ղեկավարի նշանակումը՝ ըստ Կովբյուրոյի հուլիսի 5-ի որոշման, պետք է համաձայնեցվեր ՀԽՍՀ-ի հետ, իսկ դատախազին անմիջականորեն նշանակում էր ԽՍՀՄ դատախազը:

3. Օրենքի երրորդ հոդվածն ամրագրել է այն սկզբունքը, որ ինքնավար մարզի և միութենական հանրապետության տարածքային ամբողջականությունը պետք է որոշվի նույն սկզբունքով: Մասնավորապես՝ *«Ինքնավար մարզի տարածքը չի կարող փոխվել առանց ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհրդի համաձայնության»:* Ինչպես Շ.Ավակյանն է նշում. «Իրավաբանորեն դա նշանակում է, որ ԼՂԻՄ-ն իր տարածքի նկատմամբ ունեցել է նույնքան ինքնիշխանություն, որքան որ Ադր. ԽՍՀ-ն է ունեցել իր տարածքի ու սահմանների նկատմամբ: Ընդ որում՝ ԼՂԻՄ ինքնիշխանությունն իր տարածքի նկատմամբ եղել է բացարձակ, քանի որ տարածքի ու սահմանների փոփոխման հարցում միակ իրավասությունը պատկանել է ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհրդին, իսկ միութենական ու հանրապետական իշխանություններն իրավասու չեն եղել միջամտելու այդ հարցերում: Մինչդեռ, Ադրբեջանական ԽՍՀ սահմանների փոփոխության հարցը կախված էր նաև Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդում ընտրվող ազգությամբ հայ պատգամավորների ձայներից» [12, c. 21.]:
4. ԼՂԻՄ-ի մասին օրենքի չորրորդ հոդվածն արտացոլում է խորհրդային տիպի բոլոր ազգային-պետական կազմավորումների իրավահավասարությունը՝ կապված օրենսդիր մարմնում նրանց ներկայացվածության հետ: ԽՍՀՄ Սահմանադրության 110-րդ դրույթի համաձայն՝ ԽՍՀՄ Ազգությունների խորհրդի կազմում ԼՂԻՄ-ից ընտրվել է հինգ պատգամավոր: Փաստորեն, տարբերությունը միայն քանակի՝ քվոտաների մեջ էր:

Ղարաբաղյան հակամարտությունը նոր փուլ մտավ 1988թ., երբ ԼՂԻՄ բարձրագույն ներկայացուցչական մարմինը հիմնախնդրի խաղաղ կարգավորման և մարզի բնակչության կամքն արտահայտե-

լով, մարզային խորհրդի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանում որոշում կայացրեց, որը խնդրանք էր պարունակում Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին իր կազմից դուրս գալու, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ իր կազմի մեջ ընդգրկելու և ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ այս խնդրանքը բավարարելու համար [13]:

Բուն փաստաթղթից բխում են հետևյալ իրավաքաղաքական փաստարկները.

1. ԼՂԻՄ ներկայացուցչական մարմնի 1988թ. փետրվարի 20-ի որոշումը հիմնախնդրի կարգավորման նպատակով ԽՍՀՄ ղեկավարությանն ուղղված ԼՂԻՄ աշխատավորության բազմաթիվ դիմումների յուրօրինակ իրավական ձևակերպումն էր: Ինչպես հայտնի է, մարզը Մայր Հայրենիքի հետ վերամիավորելու նպատակով 1987թ. շուրջ 80.000 քաղաքացիների ստորագրություն էր հավաքվել: Իսկ որոշմանը նախորդած օրերին, մասնավորապես փետրվարի 13-ից անընդմեջ, մարզի կենտրոնական հրապարակում բազմահազարանոց հանրահավաքներ էին տեղի ունենում, որի մասնակիցների պահանջով է արտահերթ նստաշրջան հրավիրվել և ընդունվել այդպիսի որոշում:
2. Ժողովրդի կամքն արտահայտող խնդրագիրը, այդպիսին լինելուց բացի, արտառոց որևէ բան չէր պարունակում: Դրան ընդառաջ՝ Բաքուն հաջորդ օրն իսկ Աղդամից արշավ սկսեց դեպի Ստեփանակերտ, իսկ այնուհետև՝ բացահայտ ցեղասպանություն ձեռնարկեց ադրբեջանահայության նկատմամբ՝ սանձազերծելով լայնածավալ ռազմական գործողություններ դեռևս Ադր. ԽՍՀ քաղաքացիներ համարվող հայ ազգաբնակչության նկատմամբ՝ ռազմական ավիացիայի, ծանր հրետանու և բնակչության զանգվածային ոչնչացման ժամանակակից այլ զինատեսակներով:

3. 1988թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ բարձրագույն ներկայացուցչական մարմնի կողմից իրեն ուղղված խնդրագիրը Բաքվում ընկալել են որպես Ադր. ԽՍՀ-ից ԼՂԻՄ առանձնացման վերջնական որոշում: Այսինքն՝ այդ պահից ի վեր Ադր. ԽՍՀ ղեկավարությունը ԼՂԻՄ-ը սկսել է դիտարկել որպես իր տարածքից դուրս եկած պետական կազմավորում: Հարցը մեկընդմիշտ լուծելու և կորցրածը վերադարձնելու նպատակով Բաքուն դիմեց զենքի ուժի: Արդյունքում՝ սանձազերծած պատերազմն ավարտել է սեփական պարտությամբ և անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակմամբ:

Մեր կարծիքով, Ադր. ԽՍՀ իշխանությունների նման ծայրահեղ հակազդեցությունը պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով: Բաքվում հարմար առիթ էին որոնում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հարցը վերջնականապես լուծելու և Ադր. ԽՍՀ-ն ադրբեջանական ազգային պետություն դարձնելու համար: Օգտվելով կենտրոնի ցուցաբերած ուղղակի և անուղղակի աջակցությունից՝ ադրբեջանական իշխանությունները ձեռնամուխ եղան ԼՂԻՄ-ը հայաթափելու մշակված քաղաքականության իրագործմանը: «Ադրբեջանական» կոչված նոր ազգի ձևավորման համար ամենամեծ «խոչընդոտը», ինչպես արդեն նշվեց, ԼՂԻՄ-ն էր, որը, չնայած ադրբեջանական իշխանությունների գործադրած համառ ջանքերին, որպես պետականություն պահպանում էր իր ազգային՝ հայկական նկարագիրը: Ավելին՝ ԼՂԻՄ-ն իրեն գիտակցում էր որպես ինքնուրյուն պետություն: Տեղական պաշտոնական ոչ մի փաստաթղթի մեջ երկար տարիներ չէր նշվում Ադրբեջանը որպես վերադաս պետություն: ԼՂԻՄ իշխանությունն «իր երկրի ներսում» հավասարապես պաշտպանում էր ազգային փոքրամասնությունների շահերը՝ այն դիտելով որպես իր քաղաքական կարևոր խնդիրներից մեկը [14]: Այս հանգա-

մանքն ադրբեջանական իշխանությունները լուրջ սպառնալիք էին դիտում տարբեր ժողովուրդների՝ թաթերի, թալիշների, լեզգիների և այլոց տարածքները յուրացրած և գրեթե նրանց վերջնական միաձուլումն իրականացրած «ադրբեջանական» կոչված ազգի ձևավորման համար: Դրանով էր պայմանավորված հայերի նկատմամբ Ադր. ԽՍՀ-ում տարվող բռնությունների ու հալածանքների քաղաքականության ողջ դաժանությունը:

Հաջորդ բանալի փաստաթուղթը 1988թ. հունիսի 13-ին Ադր. ԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդական պատգամավորների դիմումին ի պատասխան ընդունած որոշումն է [5, 14.06.1988]:

1. Փաստաթղթում վերջին անգամ արձանագրվել է Ադր. ԽՍՀ արտազգային բնույթը, որը ստեղծվել էր քսանական թվականներին որպես *հայ-մուսուլմանական* պետական կազմավորում: Քաղաքական այն պատճառաբանությունը, թե *ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նստաշրջանի խնդրանքի իրականացումը կհակասի հանրապետության հայ և ադրբեջանցի բնակչության շահերին,* փաստորեն որպես ելակետային գաղափար առաջ էր քաշվել դեռևս Ադր. ԽՍՀ կազմավորման իրավաքաղաքական համատեքստում: Ինչպես հայտնի է, դարասկզբին Ադր. ԽՍՀ-ն ստեղծվել էր որպես մուսուլմանների և հայերի արտազգային պետություն: Չնայած Ադր. ԽՍՀ ղեկավարությունն իրավական այդ ձևակերպումը խեղաթյուրեց՝ այն ներկայացնելով ադրբեջանցիներ ու հայեր արտահայտությամբ, այնուամենայնիվ, նրանք ստիպված մեկ անգամ ևս փաստեցին, որ Ադր. ԽՍՀ պետականակիր ազգերից մեկը հայերն են: Հետևաբար, 90-ական թվականներին ԽՍՀՄ լուծարման հետ կապված՝ արտազգայինից ազգային պետություն ստեղծելու ընթացքում Ադր. ԽՍՀ տարածքում ազգային

պետականություն ունենալու իրավունք հավասարապես ունեին նաև հայերը:

2. Փաստաթղթի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությունը, որտեղ նշված է. *«...մարզի ղեկավարությունը մինչև վերջին ժամանակները թույլ է տվել լուրջ թերություններ, ամբողջությամբ հաշվի չի առել բնակչության ազգային առանձնահատկությունը»,* վկայում է, որ լուրջ թերությունները կապված են եղել մարզի բնակչության ազգային առանձնահատկությունն անտեսելու հետ: Հետևաբար, դրանց վերացումը ենթադրում է քայլեր՝ ուղղված ազգային հարցի լուծմանը, որպիսի խնդրանքով 1988թ. փետրվարի 20-ին Ադր. ԽՍՀ-ին էր դիմել ԼՂԻՄ ներկայացուցչական մարմինը: Մինչդեռ, ի հակադրություն վերոնշյալի, նույն փաստաթղթի երրորդ պարբերությունում, խեղաթյուրելով խնդրի պատկերը, հարցի լուծումը կապվում է *«ԼՂԻՄ-ում արտադրական ուժերի զարգացումն արագացնող բարենպաստ պայմանների ստեղծման հետ»:*
3. Ադր. ԽՍՀ՝ որպես հայերի և մուսուլմանների միասնական պետական միության գաղափարն իր արտահայտությունն է գտել ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների հիմնախնդրի կարգավորմանն ուղղված քայլերից մեկում՝ 1988թ. մարտի 24-ի ԽՄԿԿ Կենտկոմի ու ԽՍՀՄ Նախարարների խորհրդի ընդունած «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը 1988-1995թթ. արագացնելու միջոցառումների մասին» որոշման մեջ, որում հիմնախնդրի կարգավորման նպատակով առաջարկվող միջոցառումներն ընդգրկում էին ողջ Ադր. ԽՍՀ-ն [5, 29.03.1989]: Չնայած փաստաթղթի վերնագրում նշված էր միայն մարզի անվանումը, այնուամենայնիվ, ծրագրով նախատեսված միջոցառումները գործնականում ընդգրկում էին հանրապետության

ողջ տարածքը՝ ներառյալ մայրաքաղաք Բաքուն, որտեղ նախատեսվում էր վերաբացել Հայկական պետական թատրոնը: 1988 թվականից՝ հիմնախնդրի վերսկսման ամենասկզբից, կենտրոնը նույն ոգով շրջանառության մեջ էր դրել համապատասխան անվանում՝ «Իրադարձությունները Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ»:

Խորհրդային ժամանակաշրջանում ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերից մեկը կապված է 1989 թվականի հունվարի 12-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ընդունած հրամանագրի հետ՝ ԼՂԻՄ-ում Ա.Վոլսկու գլխավորությամբ կառավարման հատուկ ձևի՝ Հատուկ կառավարման կոմիտեի (ՀԿԿ) սահմանման հետ [15, c. 14].

1. ԼՂԻՄ-ում Կառավարման հատուկ ձև մտցնելն, իր հակասական բնույթով հանդերձ, որոշակիորեն համապատասխանում էր ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ նստաշրջանի՝ մարզը Ադր. ԽՍՀ կազմից դուրս բերելու որոշման բովանդակությանը, մանավանդ որ Ա.Վոլսկու ծրագրով նախատեսվում էր ամրապնդել ԼՂԻՄ-ի ու Հայաստանի միջև տնտեսական ու մշակութային կապերը [16]: Ակնհայտ է, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ընդունած հրամանագիրն այլ քաղաքական նպատակներ էր հետապնդում: Բայց իրականությունն այն է, որ հրամանագրով ԼՂԻՄ-ը փաստացիորեն դուրս բերվեց Ադր. ԽՍՀ ենթակայությունից:
2. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը ԼՂԻՄ-ում կառավարման հատուկ ձև մտցնելու անհրաժեշտությունը հիմնավորել է *«Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում և նրա շուրջը ազգամիջյան հարաբերությունների շարունակվող լարվածության կապակցությամբ՝ նպատակ ունենալով կանխել*

դրանց հետագա սրումը և կայունացնել իրադրությունն այդ տարածաշրջանում...»: Այսինքն՝ Ադր. ԽՍՀ՝ որպես հայերի և մուսուլմանների միասնական պետական միության, գաղափարն անուղղակիորեն իր արտահայտությունն է գտել ՀԿԿ-ի մասին հրամանագրի մեջ:

3. 1989 թվականին ԼՂԻՄ-ում մտցված հատուկ կառավարման կարգավիճակով մարզը փաստացիորեն դուրս է բերվել Ադր. ԽՍՀ ենթակայությունից: Համաձայն Հատուկ կառավարման կոմիտեի Հրամանագրի երրորդ կետի՝ *ԼՂԻՄ տնտեսական ամբողջ համակարգը, մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության, մասսայական ինֆորմացիայի մյուս միջոցների օրգանները, հրատարակչությունները, պոլիգրաֆիական ձեռնարկությունները, ներքին գործերի մարմինները, ինչպես նաև մշակույթի, ժողովրդական կրթության, առողջապահության հիմնարկություններն ու ոչ արտադրական ոլորտի մյուս կազմակերպությունները,* անկախ իրենց ենթակայությունից ու գերատեսչական պատկանելությունից, դուրս են բերվել Ադր. ԽՍՀ ենթակայությունից: *Հատուկ կառավարման կարգավիճակը ժամանակագրորեն մարզի՝ ԽՍՀՄ, ՀԽՍՀ և Ադր. ԽՍՀ կողմից ճանաչված վերջին կարգավիճակն էր խորհրդային տարիներին:*
4. ԽՍՀՄ սահմանադրական կոմիտեի վերահսկիչ մարմինը 1991թ. նոյեմբերի 28-ի որոշմամբ ԽՍՀՄ ԳԽ նախագահության «ԼՂԻՄ-ում կառավարման հատուկ ձև մտցնելու մասին» հրամանագիրը ճանաչեց հակասահմանադրական՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի 20-րդ գումարման ժողովրդական պատգամավորների խորհրդի և նրա գործադիր կոմիտեի լիազորությունները դադարեցնելու մասով, «մինչև խորհրդի նոր անդամների ընտրությունների կազմակերպումը»:

Հատուկ կառավարման կոմիտեի սահմանման մասին հրամանագրի ընդունումից հետո գործնականում այլևս ԼՂԻՄ-ը Ադր. ԽՍՀ ենթակայության տակ չի եղել: Հատուկ կառավարման կարգավիճակի վերացումից անմիջապես հետո՝ 1989թ. դեկտեմբերի 1-ին, ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը և ԼՂԻՄ-ում ընտրություններով ձևավորված Ազգային խորհրդի պատգամավորները *համատեղ նստաշրջանով* հռչակեցին ԼՂԻՄ և ՀԽՍՀ վերամիավորումը: Ադր. ԽՍՀ կենտրոնական իշխանությունների՝ մարզն իրենց ենթակայությանը վերադարձնելու ուղղությամբ գործադրած ջանքերը, այդ թվում նաև ԽՍՀՄ ՆԳՆ և բանակի ստորաբաժանումների աջակցությամբ իրականացրած այսպես կոչված պատժիչ գործողություններն ապարդյուն անցան, քանի որ ԼՂԻՄ-ում իշխանությունն այլևս իրականացվում էր ոչ թե Ադրբեջանի նշանակած դրածոների, այլ ժողովրդի կողմից ընտրված Ազգային խորհրդի կողմից: ԼՂԻՄ-ում Ադր. ԽՍՀ ինքնիշխանության կորստի մասին վկայել է նաև Ադր. ԽՍՀ Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Այազ Մութալիբովը՝ Ադրբեջանի Կոմունիստական կուսակցության Կենտկոմի 1991թ. մարտի 31-ին ունեցած զեկույցում: Նա մասնավորապես նշել է. «Հանրապետական իրավապահ մարմինները պետք է առավելագույնս օգտագործեն արտակարգ իրադրության ընձեռած հնարավորություններն ինքնավար մարզում… Անհրաժեշտ է անցնել վճռական գործողությունների, որպեսզի գործնականում վերականգնվի Ադր. ԽՍՀ ինքնիշխանությունը ԼՂԻՄ-ում» [17, c. 494]:

Նշված ժամանակաշրջանում աշխարհի մի շարք առաջատար երկրներ ու միջազգային կառույցներ նունպես իրենց դիրքորոշումն են արտահայտել Ղարաբաղյան հիմնախնդրի նկատմամբ: Դրանցից առանձնացրել ենք 1988թ. հուլիսի 7-ին Եվրոպական խորհրդարանի [18] և 1989 թվականի նոյեմբերի 19-ին ԱՄՆ Սենատի ու ներկայացուցիչների տան միաձայն ընդունած N 178 միացյալ բանաձևերը:

1. Եվրոպական խորհրդարանի ընդունած բանաձևում հստակ նշված է, որ *պատմականորեն Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայաստանի մասն է, որը կամայական որոշմամբ Ադրբեջանին է հանձնվել 1923 թվականին:* Այսինքն՝ Եվրոպական խորհրդարանն ընդունել է այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղը կամայականորեն է տրվել Ադրբեջանին՝ դրանով իսկ հաստատելով, որ արցախահայության ինքնորոշման՝ Մայր Հայրենիքի հետ վերամիավորվելուն ուղղված պայքարն արդարացի բնույթ է կրում:
2. Ինչպես նկատելի է բանաձևի տեքստից, Եվրոպական խորհրդարանը Սումգայիթում և Ադրբեջանում տեղի ունեցող բռնությունները նույնպես կապել է Լեռնային Ղարաբաղում ծավալված իրադարձությունների հետ: Դա է պատճառը, որ չնայած բանաձևն ընդունվել էր Սումգայիթի կոտորածը դատապարտելու համար, բայց այն սկսվում է Լեռնային Ղարաբաղի Հայաստանի մաս կազմելու պատմական իրողության մասին հիշատակությամբ: Սա ևս ադրբեջանահայություն-Լեռնային Ղարաբաղ կապի մասին վկայող հավելյալ օրինակներից մեկն է:
3. Բանաձևում Եվրոպական խորհրդարանն Ադրբեջանին դատապարտում է Սումգայիթում և Բաքվում հայերի կոտորածների, զանգվածային սպանությունների ու բռնությունների համար, *ինչի հետևանքով հայերի համար վտանգավոր է ապրել Ադրբեջանում:* Սա վկայությունն է այն փաստի, որ հենց Ադրբեջանն է հանդիսանում զինված առճակատման նախահարձակ կողմը, որը փորձել է հայերի ֆիզիկական ոչնչացմամբ լուծել Ղարաբաղյան հակամարտությունը:

ԱՄՆ-ը Ղարաբաղյան հակամարտությանն առնչվող և հայ ժողովրդի արդարացի պայքարին սատարող մի շարք որոշումներ է

ընդունել: Դրանց ուսումնասիրությունը, բացահայտելով տվյալ ժամանակաշրջանում ԱՄՆ որդեգրած քաղաքականության միտումները [19, էջ 48-54], միաժամանակ հետաքրքիր քաղաքական փաստարկներ է պարունակում [20].

1. ԱՄՆ երկու օրենսդիր մարմիններն, իրենց երկրի դիրքորոշումը հայտնելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի նկատմամբ, որոշման տեքստի առաջին երկու պարբերությունում *հակամարտությունը խաղաղությամբ և արդարությամբ կարգավորելու համար ԱՄՆ պաշտպանությունն են հայտնում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության 80 տոկոսանոց հայ մեծամասնության ինքնորոշման և ազատության ձգտմանը:* Այսինքն՝ ԱՄՆ օրենսդիր մարմիններն իրենց որոշմամբ անուղղակիորեն փաստել են, որ *հակամարտությունը խաղաղությամբ և արդարությամբ կարգավորելու պայմանը մարզի մեծամասնություն կազմող հայերի ինքնորոշման և ազատության ձգտումը հարգելն է:* Մեր օրերում հիմնախնդիրը խաղաղությամբ և արդարությամբ կարգավորելու պայմանը չի փոխվել: Դա նույն ժողովրդի ինքնորոշման և ազատության ձգտումն իրագործած իրավունքի հարգումն ու ճանաչումն է:
2. ԱՄՆ Կոնգրեսն իր որոշման երրորդ կետով՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի արդարացի ձգտմանն ուղղված պաշտպանությանը գործնական կիրառություն տալու նպատակով, գտնում էր, որ ԱՄՆ-ը պետք է «Խորհրդային Միության հետ երկկողմ բանավեճերի ընթացքում աջակցի Լեռնային Ղարաբաղի առթիվ ծագած կոնֆլիկտի այնպիսի արդարացի կարգավորմանը, որն, իրոք, արտացոլի այդ մարզի ժողովրդի հայացքները»: Այսինքն՝ Կոնգրեսը ոչ միայն ԽՍՀՄ իշխանություններից, այլև ԱՄՆ իշխանություններից էր պահանջում հետամուտ լինել հարցի արդարացի լուծմանը:

3. Բանաձևն իր ամբողջության մեջ առանձնանում է այն առումով, որ հստակ ճանաչում է Լեռնային Ղարաբաղի մեծամասնություն կազմող հայ բնակչության ինքնորոշման իրավունքը: Միաժամանակ, այդ ծավալուն որոշման մեջ ԱՄՆ Կոնգրեսը, բազմաթիվ անգամ հիշատակելով Լեռնային Ղարաբաղի մասին, որևէ կերպ այն չի դիտարկել որպես Ադրբեջանի մաս: Ընդհակառակը, իր բոլոր ձևակերպումներում Կոնգրեսը միմյանցից պարզորոշ տարանջատել է Լեռնային Ղարաբաղ ու Ադրբեջան հասկացությունները: Միամտություն է կարծել, թե այդ հեղինակավոր օրենսդիր մարմնի կողմից Լեռնային Ղարաբաղը որպես Ադրբեջանի մաս չհիշատակելը պատահականություն է, մանավանդ որ դրանից առաջ հրապարակում հայտնված ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության գաղտնազերծված տվյալները նույնպես փաստում էին, որ «Լեռնային Ղարաբաղը պատմականորեն հայկական հող է» [21]:
4. ԱՄՆ-ը բարձրագույն իշխանության մակարդակով ընդունել և դատապարտել է Լեռնային Ղարաբաղում, Սումգայիթում, ինչպես նաև Ադրբեջանի մյուս հայաբնակ շրջաններում Ադրբեջանի իրականացրած հայերի կոտորածները, կազմակերպած բռնությունը հայերի, հրեաների և այլ էթնիկ խմբերի նկատմամբ, միաժամանակ Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի ու Վրաստանի շրջափակումը համարելով մարդու իրավունքների կոպիտ ոտնահարման ակտեր: Այսինքն՝ սա վկայությունն է այն փաստարկի, որ ԱՄՆ-ը նույնպես ընդունել է, որ Ադրբեջանն է հանդիսանում զինված առճակատման նախահարձակ կողմը, որը փորձել է հայերի ոչնչացմամբ, հրեաների և այլ ազգերի նկատմամբ իրականացվող բռնություններով լուծել Ադրբեջանի ազգային խնդիրները: Ավելի ուշ Ադրբեջանի Հանրապետությունն այդ երկրի պետականակիր ազգերից մեկին ոչնչացնելու և ղարա-

բաղյան հակամարտությունը վերջնականորեն լուծելու նպատակով բացահայտ ռազմական գործողությունների է դիմել:

ԱՄՆ-ի կողմից տվյալ ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի բնակչության օգտին հանդես գալը, բնականաբար, բխում էր ԱՄՆ պետական շահերից, որը գլխավորապես ԽՍՀՄ-ը ներսից քայքայելու նպատակ էր հետապնդում: Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ այդպիսի որոշումների ընդունումը փաստորեն դրա արգասիքն է: Այնուամենայնիվ, վերոնշյալ փաստարկները հաստատում են, որ այդպիսի քաղաքականություն իրականացնելու համար ԱՄՆ-ում ստիպված էին ճշգրտորեն տեղեկանալ ոչ միայն Լեռնային Ղարաբաղի ներկային, այլև անցյալին:

Այսպիսով, ԼՂԻՄ կազմավորման և Ադր. ԽՍՀ կազմից դուրսբերման շրջանի փաստաթղթերի ուսումնասիրությունները վկայում են, որ խորհրդային տարիներին իր սահմաններում ընդգրկված տարածքների, մասնավորապես՝ Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի հարցերը չեն եղել Խորհրդային Ադրբեջանի ներքին գործը, ԽՍՀՄ միասնական միութենական երկրի Սահմանադրության ու օրենքների տեսակետից: Բացի ԽՍՀՄ Սահմանադրությունից, Բաքվի ինքնիշխանությունն իրեն հանձնված տարածքներում սահմանափակող այլ փաստարկներ ևս կան: Նախիջևանի դեպքում դա մինչ օրս գործող Կարսի 1921թ. մարտի 16-ի պայմանագիրն է, իսկ ԼՂԻՄ դեպքում՝ Կովբյուրոյի միջազգային պայմանագրի հավասարեցված 1921թ. հուլիսի 5-ի որոշման երկրորդ կետը: Մյուս կողմից, ԽՍՀՄ իրավական տիրույթում ԼՂԻՄ-ը և Ադր. ԽՍՀ-ն պետականության հիմնական հատկանիշներով առավելագույնը մերձեցված կարգավիճակներով կազմավորումներ են եղել: Վերջապես, Լեռնային Ղարաբաղը Ադր. ԽՍՀ կազմ է մտցվել և փաստացիորեն նրա կազմից դուրս է բերվել ԽՍՀՄ գոյության տարիներին:

Մայիս, 2014թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Մանասյան Ա.,* Ղարաբաղյան հիմնախնդիր, փաստարկներ և փաստաթղթեր (փորձագիտական հայացք), Եր. 2005:
2. К истории образования Нагорно-Карабахской Автономной Области Азербайджанской ССР 1918-1925, документы и материалы, Баку, 1989.
3. Собрание узаконений и распоряжений Рабоче-Крестьянского Правительства АССР за 1923г. Баку, 1923.
4. *Բաբայան Դ.,* Կարմիր Քրդստան. կազմավորման և լուծարման աշխարհաքաղաքական ասպեկտները, «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (10), 2005թ.:
5. Газ. «Бакинский рабочий», Баку.
6. *Փաշայան Հ.,* ԼՂՀ-ն որպես Արևելյան Անդրկովկասի հայության (ադրբեջանահայության) իրավունքների երաշխավոր (Արցախի պետական համալսարան, գիտական տեղեկագիր), Ստեփանակերտ, 2010, թիվ 1 (21):
7. *Հովհաննիսյան Վ., Դարբինյան Ա.* և այլք, Ընդդեմ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության, Եր., 2007:
8. «Зеркало», Баку, 23.07.2003.
9. *Ավակյան Շ.,* Լեռնային Ղարաբաղ. Իրավական ասպեկտներ, Եր., 2010:
10. Нагорный Карабах в международном праве и коментарии, Сост., отв. ред., авт. вступ. статей и коммент. д.ю.н., проф. Ю.Г. Барсегов, в 2-х т., т. 1, М., 2008.
11. “Закон Азербайджанской Советской Социалистической Республики о Нагорно-Карабахской автономной области”, Азгосиздат, Баку, 1987.
12. *Авакян Ш.,* Нагорный Карабах. правовые аспекты, Ер., 2014.
13. Газ. «Советский Карабах» (Степанакерт), 21 февраля 1988г.
14. *Շահեն,* Ազգային փոքրամասնությունների խնդիրը Լեռնային Ղարաբաղում, «Խորհրդային Ղարաբաղ» թերթ, Ստեփանակերտ, 1927թ. օգոստոսի 10:
15. Ведомости Верховного Совета ССР, Москва, № 3, 1989г.
16. *Вольский А.,* Мир земле Карабаха, Правда, 15 января, 1989г.
17. *Мелик-Шахназаров Арсен,* Нагорный Карабах: факты против лжи, М., 2009.
18. Документы по совместной резолюции B2-538 и 587 88, Источник: Официальный журнал Европейских сообществ № C94/11 7, июль 1988г.
19. *Փաշայան Հ.,* ԱՄՆ դիրքորոշումը Ադր. ԽՍՀ-ԼՂԻՄ հակամարտության նկատմամբ ԱՄՆ-ԽՍՀՄ հակադրության պայմաններում, Արցախի պետական համալսարան, գիտական տեղեկագիր, Ստեփանակերտ, 2007, թիվ 3 (16):
20. Газета "Коммунист", 23 ноября 1989г.
21. США признает Карабах частью Армении, http://www.regnum.ru/news/polit/145328.html

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ ԼՂԻՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱԴՐ. ԽՍՀ ԿԱԶՄԻՑ ԴՈՒՐՍԲԵՐՄԱՆ ՇՐՋԱՆԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ (1923-1989ԹԹ.)

Հրայր Փաշայան

Ամփոփագիր

ԼՂԻՄ կազմավորման և Ադր. ԽՍՀ կազմից նրա դուրսբերման շրջանի փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ խորհրդային տարիներին Նախիջևանի և Լեռնային ղարաբաղի հարցերը Խորհրդային Ադրբեջանի ներքին խնդիրները չեն հանդիսացել՝ միասնական միութենական պետության՝ ԽՍՀՄ Սահմանադրության և օրենքների տեսակետից: Բացի ԽՍՀՄ Սահմանադրությունից, գոյություն ունեն նաև այլ փաստարկներ, որոնք սահմանափակում են Բաքվի ինքնիշխանությունը՝ իրեն հանձնված տարածքներում:

Մյուս կողմից, իրավաբանական առումով ԽՍՀՄ-ը, ԼՂԻՄ-ը և Ադր. ԽՍՀ-ն բավական իդենտիկ կազմավորումներ էին հիմնական պետական ատրիբուտների առումով: Ի վերջո, Լեռնային Ղարաբաղը ներառվել է Ադր. ԽՍՀ կազմ և ըստ էության դրանից դուրս եկել ԽՍՀՄ գոյության օրոք:

ПОЛИТИЧЕСКИЕ АРГУМЕНТАЦИИ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА В ПЕРИОД ФОРМИРОВАНИЯ НКАО И В ДОКУМЕНТАХ ВЫХОДА ИЗ СОСТАВА АзССР (1923-1989)

Грайр Пашаян

Резюме

Исследование документов в период формирования НКАО и ее выхода из состава АзССР свидетельствует, что в советские годы вопросы Нахиджевана и Нагорного Карабаха не были внутренним делом Советского Азербайджана с точки зрения Конституции и законов единого союзного государства – СССР. Кроме Конституции СССР, также существуют другие аргументы, ограничивающие суверенитет Баку на переданных ему территориях.

С другой стороны, в юридическом поле СССР НКАО и АзССР были почти идентичными образованиями с точки зрения основных государственных атрибутов. Наконец, Нагорный Карабах был включен в состав АзССР и, по сути, вышел из него в период существование СССР.

POLITICAL ARGUMENTS OF THE KARABAKH CONFLICT IN THE PERIOD OF ESTABLISHMENT OF NAGORNO KARABAKH AUTONOMOUS OBLAST AND IN DOCUMENTS ON SECESSION FROM THE AZERBAIJANI SSR (1923-1989)

Hrayr Pashayan

Resume

Study of the documents for the period of establishment of NKAO and its secession from Azerbaijani SSR indicates that during the years of the Soviet rule issues concerning Nakhichevan and Nagorno Karabakh were not internal matters of the Soviet Azerbaijan from the perspective of the Constitution and laws of the unitary state of the USSR. In addition to the Constitution of the USSR there are other arguments that limit Baku's sovereignty over the territories transferred to it.

On the other hand, in the legal framework of the USSR, NKAO and Azerbaijani SSR were almost identical formations in terms of the main state attributes. Finally, Nagorno Karabakh was included in Azerbaijani SSR, but in essence, it seceded from it during the Soviet period.